




Բաժնեգին տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 10 Ֆր. Պալքանեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 10

2. ՏՄՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1930

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՔԱՅԼ ՊԱՀԵԼ

Հաւատքով Ենովք երկրէ փոխադրուեցաւ, որպէս զի մահ չտեսնէ, ու տեղ մը չէր գտնուեր, վասնզի Աստուած փոխադրեց զանիկա, քանզի տնոր փոխադրուելէն առաջ վկայուեցաւ թէ Աստուծոյ Հաճելի էր: Եբր. ԺԱ. 5:

Ենովք Աստուծոյ հետ քալեց, կը կարդանք Ծննդ. Ե. 22-24 ի մէջ: Այս բնի չուղե՞ր նաեւ թէ Ենովք Աստուծոյ հետ քայլ պահեց: Անիկա իր Աստուծոյն առաջ չանցաւ, ոչ ալ Անկէ ետ մնաց: Անիկա Աստուծոյ հետ քալեց ոչ միայն շնորհաց լուսաւոր օրերուն մէջ, հապա նաեւ փորձերու եւ դառն փորձութեանց մութ ժամերուն ալ: Ենովք իր Աստուծոյն կողքէն կ'երթար ո'չ միայն ընդհանուր մարդոց աստուածապաշտութեան ժամանակներուն, այլ նաեւ անոնց անկման ու ամբարշտութեան ժամանակները (Յուդա 14-15): Ու ի՞նչ եղաւ օրհնութիւնը Աստուծոյ հետ քալող եւ Անոր բոլորովին վստահող այս կեանքին:

(ա.) Ենովք Աստուծոյ հետ քայլ պահեց եւ երկրէ փոխադրուեցաւ: Աստուծոյ հետ քալելով մեծ յափշտակութիւնը (ներքնապէս երկրէ փոխադրուելը) արդէն ինքնին տեղի կ'ոնենայ: Եթէ այս առաջինը տեղի ունեցած է, միւսը (փոխադրութիւն առ Աստուծոյ գահը) կրնայ ոեւէ երկվայրկեանի մէջ տեղի ունենալ: Վասնզի առ Աստուած յափշտակուելէ առաջ պէտք է ազատ ըլլանք մեզմէ եւ մեր մէջ գտնուած ամէն բանէ եւ ինչ որ աշխարհի կը վերաբերի: (Ղուկ. Ի. 33-36):

(բ.) Ենովք Աստուծոյ հետ քայլ պահեց եւ այսպէս տեղ մը չէր գտնուեր: Աստուծոյ հետ քալելով մենք աշխարհի թշտերաբեմէն անյայտացած կ'ըլլանք, Աստուծոյ մէջ կը կորսուինք, ինչպէս Թէրս-թէկըն կ'ըսէ.

Աստուծոյ մէջ ծածկուած ըլլալ

Անոր հետ լման կապուել

Անոր կատարելապէս յանձնուել

Ո՛հ, վիճակ մըն է երանելի՛:

Եւ մարդիկ, որոնք զմեզ ճանչցած են որպէս հպարտ, կամակոր, դժկամակ, զմեզ այլեւս այդպէս չպիտի գտնեն, այդպէս չպիտի ճանչնան, ինչպէս Յովսէփի եղբայրները զինքը չկրցան վերաճանաչել, վասնզի շնորհքը երազատես Յովսէփէն ազատարար Յովսէփ մը շինած էր: (Ծննդ. ԽԲ. 8):

(գ.) Ենովք Աստուծոյ հետ քայլ պահեց ու այս Աստուծոյ հաճելի ըլլալու վկայութեան հասցուց զինքը: Իր կեանքին գործառնութեանց միակ զրդապատճառը Աստուծոյ հաճոյ ըլլալն էր: Իր կեանքին ամենամեծ երջանկութիւնը զԱստուած փառաւորել էր, վասնզի Աստուծոյ հետ քալելով մարդս զԱստուած ամէն բանէ աւելի սիրել կը սորվի:

(դ.) Ենովք Աստուծոյ հետ քայլ պահեց եւ այս

մասնաւոր նպատակ մը մատնանշեց իր կեանքին եւ իր վկայութեան: Ինքն անձամբ Տէրոջը գալստեան կ'սպասէր եւ կը քարոզէր զԱյն, «Որ պիտի գայ»: Պարզութիւն եւ որոշ ուղղութիւն մը պահել Աստուծոյ հետ քայլող մարդոց յատկանշական նկարագիրն է:

Սուրբ Գրքին մէջ քիչ անձերու կը հանդիպինք, որոնք շարունակական յարաբերութեան մէջ էին Աստուծոյ հետ: Աստուծոյ Եզրիպտոսի գերութենէն հանած վեց հարիւր հազարին մէջէն միայն երկու հոգի Անոր հետ քայլ պահեցին մինչեւ խոստացեալ Քանանը (Բ. Օրինաց. ԻԶ. 63):

Ու որքա՛ն յաճախ մենք, որ կանչուած ենք Անոր հետ շարունակական յարաբերութեան մէջ ըլլալու, Անոր հետ քայլ չենք պահեր: Որքա՛ն յաճախ Անկէ առաջ անցանք կամ ետ մնացինք, գացինք Անոր հետ մինչեւ այն կէտը, ուր խաչն ու խոնարհութիւնը տեսանք, այն ատեն անմիջապէս փախչելով ինքզինքնիս ազատեցինք Աստուծոյ գերիշխանութենէն եւ մեր կեանքի ղեկը մեր ձեռքն առինք: Որքա՛ն յաճախ Անոր մտքին եւ գործելակերպին հակառակ կեցած ենք: Պէտք է հիանանք այն համբերութեան վրայ, զոր Նա ունի մեզի հանդէպ, մինչեւ որ մենք երկար թափառումներէ եւ անձնական ճամբաներէ յոգնած՝ Իրեն ետ վերադառնանք:

Բայց այսօրուրնէ սկսեալ այս «զրկակ» կեանքին վախճան մը տանք: Կատարելապէս վախճան տանք մեր անձնական կեանքին: Անցնինք այն քիչուորներու կարգին որոնք Յիսուսի հետ քայլ կը պահեն Անոր անձնուրացութեան, զոհաբերութեան եւ անարգանքին մէջ:

Իրաւ հազարաւորներ հետեւեցան Անոր, երբ Նա որպէս թագաւոր Երուսաղէմ կը մտնէր, բայց քիչեր հետեւեցան Իրեն, երբ Ինք քաղաքին միւս դռնէն դուրս հանուեցաւ իբր չարագործ մը դատաւարտուելու համար (Եսայ ԾԳ. 12): Յիսուսի հետ մինչեւ խաչը քայլ պահողներուն անունները մատի վրայ կը համրուին (Յովհ. ԺԺ. 25, 26), հինգ հազարէն, զորս կերակրեց, որոնց սորվեցուց, միայն մէկը կար, եւ կրնէրէն միայն քանի մը հատ:

Պօղոս Յիսուսի հետ քայլ պահեց մինչեւ Իր չարչարանաց ճամբան եւ մահուան կերպարանքը ունենալու (Փիլ. Գ. 10):

Յովհաննէս Յիսուսի հետ քայլ պահեց, քանի որ կը վկայէ թէ, «Ինչպէս է Ինք, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհի մէջ»: (Ա. Յովհ. Գ. 17):

Մեր ժամանակին մէջ կրկին կարեւոր է Աս-

տուծոյ հետ քայլ պահել, ոչ միայն որովհետեւ փորձութիւնները բազում են, ոչ միայն որովհետեւ զաւրդ փեսային ոտքերուն ձայները արդէն կը լսուին ժամանակի նշաններուն մէջ (Մատթ. ԻԴ), հապա, որովհետեւ քրիստոնէութիւնը այսօր աւելի խորունկ նուիրում կ'ակնկալէ մեզմէ քան որ ասկէ քսան տարիներ առաջ: Ինչպէս որ առջի դարերուն քրիստոնէութիւնը հաստատ մնաց միայն մարտիրոսներու արեան միջոցաւ, նոյնպէս ալ այսօր հաստատ պիտի մնայ մարտիրոսներու բազմութեամբ:

A. d. M.

ԱՅՆ ՕՐԸ

«Վասնզի պէտք է որ մենք ամէնքս Քրիստոսի ատեալին առջեւ ներկայանանք, որպէս զի ամէն մէկը իր մարմնովը բրածներուն փոխարէնը առնէ ինչ որ գործեր է, Թէ «բարի» եւ Թէ «չար» (սմարմէք). Բ. Կոր. Ե. 10:

Այս գլխուն մէջ 26 անգամ կը հանդիպինք «մենք» զերանունին եւ զանրիկա ամէն անգամ գործածուած կը գտնենք հաւատացեալին համար: Այս թուղթը արդէն ուղղուած է Կորնթոսի մէջ գտնուած «Եկեղեցիին» ու «Սուրբերուն»: Ուստի այս դատաստանը միմիայն սուրբերուն դատաստանն է, որ տեղի պիտի ունենայ Քրիստոսի զալստեան միջոցին (Ա. Կոր. Դ. 5) եւ օգին մէջ (Ա. Թեա. Դ. 12) Քրիստոսի ատեանին առջեւ:

Այս դատաստանը պիտի չ'որոշէ դատաւորներուն արդար (փրկուած) կամ մեղաւոր (կորսուած) ըլլալը, քանզի ասիկա միմիայն փրկուածներուն դատաստանն է: Այս դատաստանը կը նմանի այն դատաւարութեան ուր դատաւորը կ'որոշէ թէ ասպարէզին մէջ վազողներէն որոնք պիտի ընդունին մրցանակը: Ասոր նման տեսարան մը նկարագրուած կը գտնենք (Ա. Կոր. Թ. 24-25) համարներուն մէջ: Ասիկա մեղքի դատաստանն է, ալ գործերու դատաստան: Ա. Կոր. Գ. 14 15 «Վասն զի մէկը ալ ուրիշ հիմ չկրնար դնել դրուածէն զատ, որ է Յիսուս Քրիստոս: Եթէ մէկը այս հիմին վրայ շինէ ոսկի, արծաթ, պատուական քարեր, փայտ, խոտ, եղէգ, ամէն մէկուն գործը յայտնի պիտի ըլլայ, քանզի օրը (դատաստանի օրը) երեւան պիտի հանէ, վասն զի կրակով պիտի յայտնուի, եւ ամէն մէկուն գործին ինչ տեսակ ըլլալը կրակը պիտի փորձէ: Եթէ մէկուն շինած գործը մնալու ըլլայ, ինք վարձք պիտի առնէ, եւ եթէ մէկուն շինածը այրելու ըլլայ, անիկա վնաս պիտի քաշէ, բայց ինք պիտի ազատի, սակայն այնպէս՝ իբր թէ կրակի մէջէն»: Այս դատաստանին արդիւնքը պիտի ըլլայ «վարձք» կամ «կորուստ»: Մեր ամէն «գէշ» ու «մե-

ռած» գործերը որ կը ներկայացուին «փայտով», «խոտով» եւ «եղէնով», պիտի սպառին եւ միայն մեր «բարի» գործերը պիտի յաւերժան: «Քրիստոնէական գործունէութիւն» կոչուած շատ գործունէութիւններ կան որ միմիայն մարդկային ու աշխարհային են եւ հաշիւի պիտի չառնուին յաւիտենական վարձատրութեան այն մեծ օրը: Անոնց համար՝ որ վարձատրութեան արժանի պիտի գտնուին՝ այն օրը պիտի ըլլայ Պսակադրութեան օրը:

Երբ Յունական խաղերը կը վերջանային՝ խաղերուն մասնակցողները կը ներկայանային դատաւորին առջեւ ու խաղը շահողները կստանային դափնիի տերեւներէ պատրաստուած ապականացու պսակ մը: Յաղթողները այսպէս կը վարձատրուէին, սակայն մրցանակը չշահողները ոչ կը վարձատրուէին եւ ոչ ալ կը պատժուէին:

Նոր Կտակարանին մէջ կը լիշուին հինգ պսակներ.

Ա. Կենաց Պսակը, որ մարտիրոսներու պսակն է ու երկու անգամ միայն յիշուած: «Երանելի է այն մարդը որ փորձութեան կը համբերէ, վասն զի եթէ փորձուելով ընտիր գտնուի, Կենաց պսակը պիտի առնէ, զոր - Տէրը զինքը սիրողներուն խոստացաւ: Յակ. Ա. 12: Բնաւ մի վախճար այն բաներէն զորոք պիտի կրեա, ահա Բանասրկուն ձեզմէ մէկ քանինը բանսը պիտի ձգէ որպէսզի փորձուիք, եւ տասը օր նեղութիւն պիտի ունենաք, մինչեւ ի մահ հաւատարիմ եղիք, ու քեզի Կենաց պսակը պիտի տամ»: Յայտ. Բ. 10: Այս խօսքը շնշանակելի թէ Կենաց պսակը ստանալու համար մինչեւ մեռնելու ժամանակ հաւատարիմ մնալու է, այլ մինչեւ մարտիրոսութիւն առտիճան: Այս խօսքը կը մատնանշէ մեծ նեղութեան ժամանակի մարտիրոսները:

Բ. Փառաց Պսակը. Ասիկա է վերակացուներու կամ հովիւներու պսակը, զոր Հովտապետը Լնք պիտի տայ Իր յայտնուելու առան: Սակայն զայն պիտի չտայ Աստուծոյ հօտը «անարգ շահախնդրութեամբ» արածողներուն կամ անոր վրայ «տիրողներուն»: Ա. Պետ. Ե. 2-4:

Գ. Ուրախութեան Պսակը, որ է հոգիներ շահողին պսակը: Անոնք որ մեր միջոցով Քրիստոսի կը տարուին, կը կազմեն մեր «ուրախութեան պսակը» Յիսուս Քրիստոսի գալստեան ժամանակը. Ա. Թիմ. Բ. 19, 20, Փիլ. Դ. 1:

Դ. Արդարութեան Պսակը. Ասիկա է անոնց պսակը որ կը սիրեն «Քրիստոսի յայտնուելը» եւ զայն պիտի ստանան Անոր յայտնուելու ատենը. Բ. Տիմ. Դ. 8:

Ե. Անեղծանելի Պսակը, որ է յաղթողներուն պսակը: Անոնց, որոնք իրենց «մարմինը կը ճնշեն»: Չեն զիջանիր իրենց մարմիններուն ցանկութեանց եւ իրենց վարդապետին գործէն ետ չեն կենար աշխարհային հաճոյքներու եւ ցանկութիւններու հետեւելով. Ա. Կոր. Թ. 25-27:

Եթէ չենք ուզեր «ամչնալ Անոր գալու ատենը», (Ա. Յովհ. Բ. 28) ճնշենք մեր մարմինները եւ այնպէս ապրինք որ կարենանք պսակներ ապահովել մեզի:

ԻՆՉՊԷՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՎԵՐՋԱՅԱՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ՕՐԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

(Շար. 9րդ Թիւն)

Ի՞նչ է անապատային թափառումին նշանակութիւնը.—

Շատ մը քրիստոնեաներու կեանքը սլաքապէս թափառում մըն է, հեռու խոտացեալ երկրին հանգստութենէն եւ ուրախութենէն:

Անապատային թափառումը կը նշանակէ՝

Ա. ԱՆՀԱՆՅՍՏՈՒԹԻՒՆ: Զուրկ հաստատուն բնակարանէ, տունէ, ժառանգութենէ: Իսրայէլացիները ամէն վայրէ կեան տեղափոխուելու պատրաստ գտնուելու էին, որովհետեւ երբ ամպը խորանին վրայէն բարձրանար, իրենք ճամբայ ելլելու էին: Թափառումը կը նշանակէ տրտնջել Աստուծոյ եւ Անոր նախախնամական առաջնորդութեան դէմ: Տրտնջը Աստուծոյ ընտրած առաջնորդներուն դէմ: Տրտնջը մեր ընտրած վիճակին դէմ. քանզի անապատային թափառումները իրապէս ուղիւստութիւն են Աստուծոյ դէմ եւ հակառակ Անոր փափաքներուն: Թափառումը երբեմն կը նշանակէ Եզիպտոս (մեղքի կեանք) վերադառնալու կարօտը եւ երբեմն նոյն իսկ վերադարձ:

Բ. ԱՊՍՐԴԻԻՒՆ ԿԵԱՆՔ: Իսրայէլի ժողովուրդը անապատին մէջ պատերազմեցաւ, սակայն իր պատերազմելովը ոչինչ չափեցաւ: Անապատային պատերազմներով ու եւ է ստացուածքի չտիրացան անոնք, այլ միայն իրենց անմիջական ճամբուն վրայ գտնուած արգելքները վերցուցին: Այս է նաեւ բոլոր այն քրիստոնեաներուն աւօրեայ կեանքը որ ընդունած չեն յաղթական կեանքը: Անոնց կեանքը կը բաղկանայ գործ չտեսնելէ: Անոնք չեն պարեր, քարտ չեն խաղար, թատրոն չեն երթար, թերեւս չեն ալ խմեր կամ չեն ծխեր, սակայն անոնց կեանքը կը բաղկանայ սխալ կամ վնասակար բաներու չմասնակցելէ: Անոնք չեն կրեր խոտացեալ երկրին, այսինքն Հօգ կին պտուղները, որ են սէր, խնդութիւն, խաղաղութիւն: Անոնք չեն ածիր շնորհքով: Անոնց ծառայութիւնը, եթէ ոչ բնաւ, գէթ քիչ արդիւնք յառաջ կը բերէ: Երեւցած արգելքներն ալ երկարատեւ չեն ըլլար: Սովորաբար միայն Յաղթական կեանքը ապրող քրիստոնեաներուն մէջ է որ Քրիստոս կոտորուած կը տեսնէ Իր փափաքը, որ Իր պտուղը մնայ: (Յովհ. ԺԵ. 16): Շատ քրիստոնեաներ հրաժարած են մեղքի հոգոյքներէն, սակայն անոնք հրաժարած չեն մեղքէն: Անոնք մտած չեն խոտացեալ երկիրը, ուր կը գտնուի ճշմարիտ ուրախութիւն: Այսպիսի ինքնին ուղբալի է, սակայն անոնց թերութեան ամենէն տիւրը մտաւ այն է որ նաեւ ուրիշներ դուրս կը պահեն:

Յետեւ եւ Քաղէք իրաւունք ունէին խոտացեալ երկիրը մտնելու, ինչպէս նաեւ Մովսէս: Սակայն առաջին երկուքը 40 տարի դուրս մնացին անկէ, որովհետեւ միւսները մտնելու

ինչպէս Աստուած տուած էր Յիսուս քրիստոսը որ. պէսզի մեռնէր յանցաւոր աշխարհի մեղաց համար, ցուցուց թէ այս մահով բոլորովին յաղթած էր մեղքին եւ թէ որովհետեւ քրիստոս չարչարուած էր իրեն համար, ձրի եւ կատարեալ փրկութիւն մը շնորհուած էր իրեն, եթէ հաւատար Աստուծոյ Միածին որդւոյն անուան, ու Անոր փոխանորդական մահուանը:

Բանտարկեալը շատ զարմացաւ փրկագործու. թեան աստուածային ծրագրին այսքան պարզ եւ ձրի ըլլալուն: Այս անհաւատալի ըլլալու չափ բարեբաւ. տիկ լուր մ'էր: Ինչպէ՞ս կրնար ըլլալ որ իր անթիւ մեղքերը ներուէին լոկ քրիստոսի Աւետարանին փա. ռաւոր եւ ուրախալի «Մեծ լուրին» հաւատալով:

Պ. Մ. իրեն պարզեց թէ «Ամէն բան կատարուած էր քրիստոսի կողմէ, երբ Ան մեռաւ Գողգոթայի վրայ. ըսաւ թէ «Յիսուս իր ազատութիւնը ձեռք բերած էր իբրեւ փրկանք տալով իր թանկագին արիւնը:

ձիշդ այս էր որ բանտարկեալը չէր հասկնար: Զէ՞ որ իրեն կ'իյնար լաւագոյնը ընել թողութեան անպա. տում պարգեւը ձեռք բերելու համար:

Պ. Մ. զանազան սուրբգրային համարներով զայն լուսաբանեց:

«Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ, *Էւ Անոր վէրքերովը մենք բժշկուեցանք*: Ամէն ոչխարներու պէս մոլորեցանք: Ամէն մէկս իր ճամբան դարձաւ, *Էւ Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը Անոր վրայ դրաւ*: Եսայ. ԾԳ. 5, 6:

«Ահա Աստուծոյ Գառը՝ որ աշխարհի մեղքը կը վերցնէ» ցովհ. Ա. 29. «Ան որ գործ մը կ'ընէ, վարձքը շնորհքէ եղած չսեպուի որ անոր, հապա պարտքէ: *Իսկ ան որ չգործէր, բայց կը հաւատայ* Անոր որ ամբա. րիջտը կ'արդարացնէ, անոր հաւատքը իրեն արդարու. թիւն կը սեպուի (Հռովմ. Գ. 4, 5): «Ով որ Անոր կը հա. ւատայ, իր անունովը մեղքերու թողութիւն կ'առնէ. Գործոց Ժ. 43:

Երբ Պ. Մ. կը բաժնուէր, ըսնապարկեալը եռանդով սեղմեց անոր ձեռքը խնդրելով որ չուշանար վերա. դառնալու. «Որպէսզի կարողանամ պատրաստուիլ ամենասուրբ Աստուծոյ ներկայանալու» թախանծեց: «Ա՛խ, որքա՛ն կը փափաքիմ փրկուիլ... եթէ միայն կարենայի հասկնա՛լ:

Պ. Մ. ամէն գիշեր կուգար, բայց բանտարկեալը չէր կրնար Յշմարտութիւնը տեսնել: «Խաւարի իշ. խանը» անոր սիտքը կուրցուցած էր, որպէսզի քրիս. տոսի փառաց Աւետարանին լոյսը անոր վրայ չծագէր» Բ. Կորնթ. Դ. 4:

Գիշեր մը Պ. Մ. անոր թերթիկ մը տուաւ որ սե. ւամորթ կնոջ մը ապաշխարութեան վրայ կը պատ. մէր: Փրկութեան եւ Աստուծոյ սիրոյն այս նկարագրա. կանը խոր ազդեցութիւն գործեց իր վրայ: Կրկին եւ

կրկին կը սրբաւէր իր հոգւոյն խորերը: «Ինչպէ՞ս կրնամ յուսալ որ Աստուած կրնայ փրկել ինծի պէս թշուառ, ողորմելի արարած մը»:

Խեղճ մարդ, ինքն ալ շատերուն նման կ'երեւա. կայէր թէ փրկութիւնը կը շահուի անձնական արժա. նիքներով: Զէր կրնար ըմբռնել թէ Աստուծոյ պարգե. ւը ձրի էր նոյնիսկ ամենաստորին մարդոց համար: Հռովմ. 9. 23:

Խնամով քննեց այն համարը, որ սեւամորթ տիկ. նոջ խաղաղութիւն պարգեւած էր:

Ցովհ. Գ. 16ի աշխարհափռչակ համարն էր. «*Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր Միա. ձին որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւա. տայ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ*»:

Վայրկեանի մը մէջ, փայլալի մը նման, Յշմար. տութեան լոյսը ծագեցաւ իր խաւարած հոգւոյն մէջ: «Աստուած զինքը կը սիրէր, այնքան որ, նոյնիսկ իր Միածին որդին տուած էր իրեն համար, եւ հաւատա. լով Անոր որ ամէն բան կատարած, վճարած էր, ինքը՝ ոճրագործը, կ'արդարանար, կը փրկուէ՛ր եւ անմիջա. պէս կը տիրանար յաւիտենական կեանք»:

«Օրհնեալ ըլլայ Աստուած, փրկութեցա՛յ» աղաղա. կեց, յետոյ կանչելով իր բանտակիցը, արտորնօք հա. ղորդեց «Բարի լուրը»: Միեւնոյն ժամանակ բանտա. պետէն խնդրեց որ Պ. Մ. կանչել տայ: Երբ Մ. հասաւ. բանտարկեալը որոտագոյ կ'երգէր: Զայն տեսնելուն պէս գոչեց. «Պ. Մ. փրկութեցա՛յ, փրկութեցա՛յ կ'ըսեմ, տեսէք, նստեցէ՛ք որ պատմեմ»: Ապա նորադարձը ան. պատմելի ուրախութեամբ եւ սիրով պատմեց իր ու. նեցած նոր փոփոխութիւնը:

Նորադարձը, Տ. յաջողեցաւ իր բանտակիցն ալ համոզել որ Սուրբ Գիրք մը խնդրէ, ինչ որ շուտով շնորհուեցաւ: Տ. բոլոր գիշերը անոր հետ անցուց ջա. նալով հասկցնել փրկագործութեան աստուածային ծրագիրը:

Տ. մեծամեծ յառաջդիմութիւններ ըրաւ հոգեւոր կեանքին մէջ: Անդադար Սուրբ Գիրքը կը կարդար: Աստուծոյ խօսքը իրեն համար աշխարհի բոլոր գան. ձերէն աւելի թանկագին էր: Հեռագիտէ անոր սուրբ պատգամները ուսանելով կ'առատանար իր Տէրոջ եւ փրկչին Յիսուս քրիստոսի գերազանց գիտութեան սէջ: Օր մը Պ. Մ.ի հետ խօսած միջոցին Սուրբ Գիրքը սրտին վրայ սեղմելով ըսաւ «Ո՛հ, որքա՛ն կը սիրեմ իր խօս. քը»: Զմեռնային ուրիշ օր մը, մինչ երկիրը ծածկուած էր իր սպիտակ վերմակովը, Տ. իր գրքին մէջ համար մը ցոյց տուաւ Մ.ի ըսելով. «Ասիկա Յիշդ իմ պատ. կերս էր», բայց յարեց ժպտելով «Հիմա ձիւնի պէս մաքրուեցայ Յիսուսի արիւնովը»:

Վերջին գիշերը Պ. Մ. անոր հետ անցուց գլխատ. ման առաւօտը. Տ. քանի մը հոգեւոր երգեր երգեց: Ժամը 7ին սպայ մը նկուղ իջաւ մահուան հրովար. տակը կարդալու: Ժամ մը վերջը դահիճը երկու դա.

անսուրբ կենդանիներու միջեւ (Ղեւոն. ԺԱ.): Թէեւ մենք այժմ նոր կտակարանէն գիտենք թէ Աստուծոյ բոլոր արարածները մաքուր են, եթէ Աստուծոյ զանազան մարմններէ (Գործ. Ա. 15), բայց դարձեալ տարբերութիւն մը կայ, քանզի մինչ մէկ կողմէն Յիսուսը Աստուծոյ Գաւը կ'անուանուի եւ Սուրբ Հոգին ալ աղանձի մը կերպարանքով վար կ'իջնէ, միւս կողմէն ալ կ'ըսուի, Վերս պիտի մ'նան շունները (Յայտ. ԻԲ 15, բաղդ. Նաեւ Մատթ. Է. 6):

Աստուծոյ ստեղծագործութեան վեցերորդ օրուան մէջ՝ *ամէն կենդանի իր տեսակին պէս ստեղծեց*: Սուրբ Գրքը բան մը զգիտե՞ր ներկայիս շատ տարածուած *Տարուհնականութեան* նկատմամբ, որուն համաձայն բարձրագոյն կենդանիները, եւ նոյնիսկ մարդը, միլիոնաւոր տարիներու ընթացքին բարեւորացումներէ մտնելով ստեղծուած են: Եւ իրենց տարբեր տեսակներով մէկ անգամէն ստեղծուած են: Շիտակ է թէ կենդանիներու եւ բոյսերու շատ մը տեսակներ ստեղծագործութեան օրէն ասօլին ջնջուած են, բայց դեռ մէկը չէ կրցած ապացուցանել թէ նոր տեսակներ գոյութիւն առած են այն օրէն յետոյ, երբ մարդու ստեղծումէն յետոյ արարչագործութիւնը վերջ գտաւ: Թէեւ մարդ շուններէն, ծաղիկներէն եւ բոյսերէն շատ մը երկրորդական տեսակներ արտադրած է, բայց բուն իսկ տեսակը ան փոփոխ մ'նացած է: Քանի աշխարհը գոյութիւն ունի, եղէ մը ձի մը յառաջ եկած չէ եւ ո'չ թէ միայն Սուրբ Գրքի հասկացման բնագիտութեան տեսակէտով անհիմն է այն ենթադրութիւնը, որ մեր դարուն մէջ երեւան եկած է (Թէեւ տարբեր ձևով մը ինչ ժամանակներու մէջ ալ արդէն գոյութիւն ունէր), եւ որոն համաձայն մարդը՝ Արեւիկէի խորերը կապիկի նման կենդանի մը ծագում առած է եւ անգիտակից մղումով մը դէպի կատարելութիւն ձգտելով լեզու ստեղծած: Հազարաւոր իրողութիւններ ասոր կը հակասին:

Ինչպէս երրորդ օրուան մէջ ստեղծուած բոյսերուն եւ ինչ գերորդի ծուկերուն ու ծառաներուն՝ նոյնպէս ալ վեցերորդ օրուան մէջ երեւան եկած չորքոտանիներուն անհամար եւ մասամբ լատիսկապառ, մ'նացորդները դեռ կը գտնուին երկրի ներքին խաւերուն մէջ: Բաւական է որ ընթերցողը բնագիտական թանգարան մը այցելէ եւ ահա՛ առատօրէն պիտի գտնէ անոնց նմանները: Եւ որպէս զի Սուրբ Գրքի սախտքն ալ հաստատուի թէ չորքոտանիները վեցերորդ օրուանէ առաջ ստեղծուած չեն, անոնց մ'նացորդներուն չենք հանդիպիր երկրի այն խոր խաւերուն մէջ, ուր բոյսերու եւ ջրային կենդանիներու մ'նացորդները արդէն կը տեսնուին: Զորքոտանիներ կը գտնենք առաջին անգամ աւելի վերին, կրային խաւերուն մէջ: Սակայն հոգ գտնուող քարացած կմակները երբեք հետք մը չեն ցուցներ թէ ջրային կենդանիներէն չորքոտանիները, օրինակի համար կոկորդիլոսէն եզր, յառաջ եկած են, հասկանալի նախահայրերն են ներկայ ժամանակուան փիղին, ռնգելիւրին, գետածիին եւ այլն, բայց մերիներէն շատ աւելի մեծ ու հոռի կու՛ր բռնացքի մեծութեամբ ազօրներով եւ անպարտ ժամիքներով, որոնք փոքր ծառի մը բունին չափ հաստ են ու 10-12 ոտք երկարութիւն ունին: Իսկ իրենց կմակները կարծես թէ գերաններէ քաղադրուած են: Երբ անոնց նայինք, կը իշնենք ինչ հեմովը, որ շքեղօրէն նկարագրուած է Յորի գրքին մէջ (Յոր. Խ, 10-19):

Օրինակի համար, այդ բրածոներուն մէջ կը հանդիպինք *Մեկաթեքիթի* (մեծ կենդանի) որ եղան մը գրեթէ երկու

բարձրութիւնը եւ երկու երկաթեքիթի ունի . . . սրունքները սինի կը նմանին եւ ճիրանները մէկ ոտք երկայն են, ծածկուած է երկու մասնաբաժնի հաստ ու կարծր մորթով եւ օժտուած այնքան ահարկու ակունքներով, որոնք կարող էին ծառի ամբողջ բուններ դիւրաբեկ խտրելու նման փշրել: Աստուծոյ այս ահարկու արարածը դանդաղօրէն կը թափառէր անտառներու մէջ եւ նման զրահապստ ամբողջի մը՝ ունէ յարձակումէն չէր վախնար. իր մորթէն ներս չէր թափանցէր ո'չ ճիրան եւ ոչ ալ ակունք, առիւծի մը կամ վագրի մը յարձակումը իր սիրտը դողալով հանէր. իր թամբ միակ մէկ հարուածովը պիտի վարեւար մեր այժմու պատահող գազաններէն ունէ մին փշրել: *Տիտեքիթի*՝ կամ (սարսափի կ'ենդանին) ալ . . . Աստուծոյ այն օրուան մէջ ստեղծեց: Ասիկա գետածիի մը կազմութիւնը ունի, բայց անկէ շատ աւելի մեծ է, օժտուած է զօրաւոր կնիքներով մը եւ կոր ժամիքներով, որոնց շնորհիւ կրնար յորդահոս գետին մէջ խաբսխուիլ ու կենայ: Որքան որ գիտենք այս կենդանին ալ առնկելով կը մտնէր: Այն ատեն գոյութիւն ունէին նաեւ մեծ փիղի երկու տեսակներ, *Մամաթ* եւ *Մասթեոնթ*. վերջինը ծածկուած էր խիտ ու խառնուած մազերով եւ գինուած սոսկալի ժանիքներով: Կ'ապրէր Եփրատային երկրներու մէջ, մինչեւ Սիպրիոյ կողմերը, ուր դեռ այսօր այս կենդանին քաղաքի ակունքներ կը գտնուին եւ մեզի կ'ընծային փղսկր: — Այո՛, այսօր Եփրատային սառցային մէջ ծրարուած կը գտնուին կենդանիներ այնպիսի վիճակի մը մէջ, որմէ շունները կրնան ճաշակել, նոյնիսկ ճամբորդներ փորձուած են այս հազարամեայ մէկ խորոված շինել ու համար փորձել: Ստեղծագործութեան վեցերորդ օրուան մէջ այս կենդանիներուն քովէն կը վագէին ահարկու մողէզագլխներ, որոնք 70 ոտք երկայն էին եւ եղան ահարկու բարձր, ինչպէս նաեւ զրահապստ (կամ թեփառ) կենդանիներ՝ 14-24 ոտք երկարութեամբ եւ ծածկուած վեցանկիւն կամ սրածայր եւ պողպատի կարծրութեամբ թւիւրով: Այս զրահապատ կենդանիներուն գրեթէ վեց անգամ փոքր տեսակները այսօր ալ դեռ կը գտնուին հարաւային Ամերիկայի մէջ: Ասոնցմէ զատ այդ բրածոներու մէջն են այլազան տեսակի փոքր կենդանիներ, զորս մենք այսօր կը գտնենք սածի մէջ շատ մասքուր կերպով գոցուած: Եւ սածի ալ ուրիշ բան չէ, եթէ ոչ ստեղծագործական ժամանակաշրջանի մայրի ծառին հետոյնէ կարծրացող խեղդ:

Այսպէս ստեղծուեցաւ կենդանին, որ այսօր անասնման արժանութիւնով մեր երկիրը կը լեցնէ: Մենք չենք գիտեր թէ յետոյ նոր երկրին վրայ ինչ պիտի ըլլայ անոր վիճակը, բայց Սուրբ Գրքը որոշ կերպով կը ցուցնէ թէ կենդանին երկրորդ դարաշրջանի մէջ ալ ծառերուն տակ պիտի պատի, ինչպէս որ առաջին դարաշրջանի մէջ կը պատէր. (Խա. ԺԱ.): Թէեւ սուրբգրական Լրջմանութիւնը մէկ կողմէն մեզմէ կը պահանջէ հեռու մնալու յանդուգն եզրակացութիւններէ, բայց միւս կողմէն ալ մեզ կ'զգուշացնէ երեւակայելու. Թէ ապագայ կատարեալ աշխարհը խեղճուկ եւ չոր է: Աստուծոյ երկինքը չէ մեծ սրահ մը, ուր մարդիկ միայն պիտի նստին, հապա փառաւոր աշխարհի մըն է ան, այո՛, նոյնիսկ Լիւթիւն մը աշխարհներու, որոնց ամենն ալ իր պայծառութեամբ ու փառքով լեցուն են: Երկնակամարին վրայ մեր տեսած միլիոնաւոր աստղերը միայն մէկ փոքր մասն են աստուածային անհուն տիեզերքին, ուր լայն տեղ կ'ընայ ըլլալ միլիոնաւոր արարածներու, որոնց նկատմամբ մենք հոս, մեր փոքր երկրին վրայ երբեք գաղափար չունինք:

(Շար.)

Թարգմ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՀԱՄԵՄՍԱՏԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐ

Գիտնական մը հետեւեալ հաշիւն ըրած է.—

Երկաթի կտոր մը 2 ֆրանք արժողութեամբ, եթէ կրակին մէջ դրուելով պոյտի վերածուի, 5 ֆրանք կ'արժէ, իսկ եթէ անկէ ասեղ շինուի 200 ֆրանք կ'արժէ, եթէ նոյն կտոր երկաթը դառնակի շեղբերու վերածուի, 1600 ֆրանք, իսկ եթէ ժամացոյցի զսպանակներու վերածուի 100,000 ֆրանք պիտի արժէ:

Յիբաւի կոն մարդիկ որ պղտիկներու երեք կարեւորութիւն չեն տար, եւ անոնց քովէն կ'անցնին, ու պէս թէ անոնք երկաթի կտորի մը պէս ցածարժէք ըլլալին: Ու դուն սիրելի պատանի երեքմի վերաւորութեամբ անոնց այդ վարմունքէն:

Բայց միտքդ դիր որ թէեւ երկաթը ցածարժէք մեծաւ մըն է, սակայն ունի իր մէջ արժէք մը, ապա միտքդ առ թէ այդ պղտիկ արժէք ունեցող երկաթը կարելիութիւններ ունի ըլլալու արժէքաւոր առարկաներ: Եթէ երկաթը չըլլար, պոյտ չպիտի շինուէր: Պոյտը երկաթէն աւելի սուղ է, ասեղը պոյտէն, դառնակի շեղբ մը ասեղէն եւ զսպանակ մը դառնակի շեղբէն աւելի արժէք կը ներկայացնէ:

Ուստի ինչպէս երկաթին մէջ, նոյնպէս քու մէջդ ալ կան կարելիութիւններ եւ անհուն կարելիութիւններ: Երկաթը անգործարանաւոր մարմին մըն է, դուն գործարանաւոր, երկաթը հանքային ու մեծած մարմին մըն է, դուն կենդանական եւ ապրող էակ մըն եւ ունի անհամեմատ մեծ կարողութիւններ, որոնք պարզուելու ու զարգանալու են:

Միայն թէ մարդիկ իրարմէ կը տարբերին եւ մարդոց ու Աստուծոյ առջեւ անհամեմատ արժէքներ կ'ընդունին:

Պղտիկ մասնակ մը, եթէ տարիներով նոյն վիճակին մէջ մնար առանց խնդալու, շարժելու, խաղալու, մեծնալու, ո՛չ թէ արժէքաւոր պիտի ըլլար հանրութեան առջեւ, այլ նոյն իսկ բեռ պիտի համարուէր: Իսկ երբ անիկա կը մեծնայ ու միայն մարմնական բաներու, մարմնական կրթութեան արժէք կուտայ եւ միայն անոնց վրայ կը խորհի եւ իր բոլոր ոյժերը մարմնական բաներու կը ծառայեցնէ, թերեւս ունենայ հսկայ մարմին մը, զօրաւոր մկանունքով, առոյգ եւ կայտառ դէմք մը, այսու ամենայնիւ կիսապայքնի մըն է, որ հազիւ բանի մը ծառայէ, պոյտ մըն է, որ ձիուն ծանրութիւնը կը վերցնէ եւ քարերու հետ միշտ պայքարի մէջ ըլլալով զայն անկումէ կը պահէ:

Բայց երբ պատանի մը իր մարմնոյն հետ մտքին ալ կարեւորութիւն տալով անոր մէջ եղած կարողութիւններն ալ զարգացնելու ջանք կ'ընէ, այն ատեն այդ պատանին աւելի օգտակար ըլլալու կարելիութիւններ կ'ունենայ քան առաջինը: Կայ սակայն աւելի բարձր վիճակ մըն ալ, այն է սրտի դաստիարակութիւնը: Ի՞նչ վտանգաւոր է զօրաւոր մարդ մը, եթէ միտք չունի, աւելի՜ վտանգաւոր է զօրաւոր եւ խելացի մարդ մը որ սիրտ չունի, չունի գութի զգացում, համեստութեան, խոհմտութեան, խոնարհութեան, յարգանքի, փափկանկատութեան, քաղցրութեան, բարեւորութեան յատկութիւնը, հապա հպարտ իր գիտութեանն ու մարմնական կարողութեանց վրայ, անփափկանկատ, դաժան, անբարեկիրթ. այսպիսի մէկն ալ իրաւ կարգ մը բաներու մէջ օգտակար պիտի ըլլար, բայց շատ բաներու մէջ փաստակար, վատնող առանց սրտի կրթութեան, մարդա խելացի կենդանիի մը կը նմանի: Սրտի կրթութիւնը բարձր արժէք կը ներկայացնէ:

Այսու ամենայնիւ Աստուծոյ զմեզ այդ գեղեցիկ կեանքին մէջ ալ պահել չուզեր, Անիկա մեզի համար աւելի բարձր նպատակներ ունի: Մարմնով, մտքով եւ սրտով դաստիարակուած մէկը որ հագեւոր կեանք չունի, կը նմանի մոմէ գեղեցիկ արձանի մը, որ ամէն կերպով հազուած, շփուած կը կենայ առջեւ եւ ամէն կերպով կատարեալ կ'երեւի, բայց չկրնար խափել, շարժիլ. կեանք չունի իր մէջ:

Եւ ինչպէս որ երկաթի կտոր մը ժամացոյցի զսպանակի փոխուելով անոր արժէքը բազմապատկած կ'ըլլանք, այսպէս պատանի մը Քրիստոսի Ս. տրեան միջոցաւ փրկութեան հասնենելով աշխարհի պատմութեան եւ Աստուծոյ թագաւորութեան համար մասնաւոր բարձր արժէք մը կ'ունենայ:

Սիրելի պատանի, երկաթի կտոր մը չես որ եթէ պոյտ ըլլաս ասեղ չկրնաս ըլլալ, կամ եթէ ասեղ ըլլաս ժամացոյցի զսպանակ չկրնաս ըլլալ: Քու մէջդ անհուն կարելիութիւններ գրած է Տէրը, զարգանալու, բարգաւաճելու, մեծնալու, արժէքաւոր մէկը ըլլալու: Ինչպէս երկաթը ուրիշ առարկայ մը ըլլալու համար կրակէ հոնցներէ անցնելու է, այդպէս ալ դուն հիւանդութեանց, դժուարութեանց, դպրոցի, վարժարանի, դպրոցի, համալսարանի հոնցներէն անցնելով կրնաս բարգաւաճիլ, բայց գիտցիր թէ ամենաարժէքաւոր եւ կատարեալ մարդն ըլլալու համար Քրիստոսի սիրոյ հոնցն ալ անցնելու ես, հոնկէ քու փրկութեանդ վտանգութիւնը առնելով, կեանքը ապրելու համար: Կեանքի արժէքները համեմատական են: Մարդիկ արժէքի տեսակէտով իրարմէ շատ կը տարբերին:

Յիսուս ըսաւ. կատարեալ եղէք, ինչպէս Ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է, ջանա՛ այս կարելիութեանց կատարելութեան հասնիլ, Քրիստոսի հոգեկին կատարեալ չափը ունենալու:

Տէրը հետդ ըլլայ:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Յրանսահայ Աւետ. եկեղեցւոյ Միութեան ժողովը տեղի ունեցաւ Մարտի 12-ի մէջ, Սեպտ. 8-12: Սոյն ժողովոյ տեղեկագիրը պիտի ներկայացուի յառաջիկայ թիւով եւ անոր յաջորդաբար պիտի հրատարակուին զանազան եկեղեցիներու տեղեկագիրները, ուրիշ քոյր եկեղեցիներու եւ արտասահմանի եղբայրներու տեղեկութիւն մը տալու համար:

ՍՏԱՅԱՆՔ

Աստուծոյ Փրկութեան Ճամբան, որ ԶՐԻ կը զրկուի ամէն անոնց, որոնք կը փափաքին ունենալ կամ ցրուել:

Հասցէ.—

N. E. Papaz, 1627 Fulton Ave., Bronx, N. Y. կամ S. Topuzian, 21 Edison Place, Port Chester, N. Y.

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպագ. «ԲԱՆՔԵՐ»-ի, 7, Րիւ Բաբեր